



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 49958 գործարքներ, որոնց քանակը 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 6.5%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 16.8%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13170 օտարման գործարքների 73.3%-ը կազմել են առուվաճառքները, 25.9%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 43.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 41.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. երրորդ եռամսյակում, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.1%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 7.2%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. երրորդ եռամսյակում, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 27.6%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 27.7%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.
Կենտրոն	416700	428000	428000
Արաբկիր	344200	356300	355500
Քանաքեռ-Զեյթուն	272300	282400	282300
Նոր-Նորք	234700	251100	250700
Ավան	244900	259300	258750
Էրեբունի	239300	249000	248600
Շենգավիթ	240900	255100	254200
Դավթաշեն	264800	274700	274000
Աջափնյակ	231700	248100	247000
Մալաթիա-Սեբաստիա	229800	241100	239200
Նուբարաշեն	140600	152300	151500
Միջինը Երևանում /բացի Նորք- Մարաշից/	260000	272500	271800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.3%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1253 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 27.9%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 6.3%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ
Արագածոտն	Աշտարակ	113000	114900	114800
	Ապարան	49400	56600	56550
	Թալին	61100	64500	64200
Արարատ	Արտաշատ	92600	94800	94800
	Մասիս	109400	115000	115000
	Վեդի	97100	99800	99300
	Արարատ	74100	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154100	154000
	Արմավիր	118400	121100	121000
	Մեծամոր	86300	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99100	99150
	Գավառ	53600	59100	59000
	Մարտունի	106300	107600	107600
	Վարդենիս	37400	44500	44300
	Ճամբարակ	22700	28100	27700
	Վանաձոր	87100	88400	88300
Լոռի	Ստեփանավան	74200	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	51600	55000	55000
	Տաշիր	43400	47000	47000
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19600	20200	20000
	Արուսյան	153000	155000	154700
Կոտայք	Նոր Հաճն	128300	128500	128500
	Բյուրեղական	107100	108100	108100
	Եղվարդ	108800	109300	109300
	Հրազդան	60100	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
	Գյումրի	108900	109300	109300
Շիրակ	Արթիկ	64500	66500	66300
	Մարալիկ	37000	40200	40100
	Գորիս	115100	121600	121000
Սյունիք	Կապան	90100	92100	92100
	Սիսիան	82800	91100	91100
	Մեղրի	69700	80100	80050
	Ագարակ	43300	46200	46000
	Քաջարան	94200	94500	94300
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	86200	95000	94700
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	117600	124400	123200
	Ջերմուկ	103500	112000	112000
	Դիլիջան	104700	113100	112700
Տավուշ	Իջևան	114000	118200	118100
	Բերդ	52000	60100	60000
	Նոյեմբերյան	42600	49400	49200
	Այրում	24800	31600	31500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.2%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1365 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 395, մարզերում միասին վերցրած՝ 970: 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 16.9%-ով, ընդ որում, Երևանում՝ 31.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.8%-ով: 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 20.9%-ով, ընդ որում Երևանում՝ 13.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 24.2%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	Երրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.
Կենտրոն	465033	476100	476100
Արաբկիր	371533	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	282200	295000	295000
Նորք Մարաշ	308600	319200	319200
Ավան	261900	270500	270500
Էրեբունի	229367	239500	239500
Շենգավիթ	246433	255000	255000
Դավթաշեն	264633	276000	276000
Աջափնյակ	240200	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	229267	238000	238000
Նուբարաշեն	144500	150500	150500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	276700	286600	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ :

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2012թ.	Երրորդ եռամսյակ 2013թ.	Երկրորդ եռամսյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	134100	136200	136200
	Ապարան	53400	60000	60000
	Թալին	68700	69200	69200
Արարատ	Արտաշատ	98400	100000	100000
	Մասիս	111700	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
	Արարատ	87300	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152200	153100	153100
	Արմավիր	104500	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94100	94800	94800
	Գավառ	52200	57100	57100
	Մարտունի	93400	96000	96000
	Վարդենիս	34000	41000	41000
	Ճամբարակ	26000	31100	31100
Լոռի	Վանաձոր	98100	100000	100000
	Ստեփանավան	87600	90000	90000
	Սպիտակ	113500	114000	114000
	Այվերդի	46400	50200	50000
	Տաշիր	50500	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29500	30000	30000
Կոտայք	Աբովյան	154300	157000	156600
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120000	120500	120500
	Եղվարդ	115600	116100	116100
	Հրազդան	79300	82600	82500
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82200	83000	83000
Շիրակ	Գյումրի	117300	118500	118500
	Արթիկ	61100	63100	63100
	Մարալիկ	49200	52000	52000
Սյունիք	Գորիս	127000	130000	130000
	Կապան	98300	100000	99900
	Սիսիան	89700	96500	96400
	Մեղրի	76500	84500	84500
	Ագարակ	46200	46900	46900
	Դաստակերտ	11600	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	84100	90000	90000
	Եղեգնաձոր	112800	116600	116600
	Ջերմուկ	122300	131200	131200
Տավուշ	Դիլիջան	108300	113000	112800
	Իջևան	121400	123100	123100
	Բերդ	57800	60000	60000
	Նոյեմբերյան	46100	48200	48100
	Այրում	34400	36200	36100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը,

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.06 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3987 միավոր /1807.91 հա/ հողեր, որից Երևանում՝ 474 միավոր /59.78 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2107 միավոր /1643.94 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /36.25 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1281 միավոր /101.60 հա/, որից Երևանում՝ 226 միավոր /10.75 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 527 միավոր /33.67 հա/, որից Երևանում՝ 217 միավոր /12.22 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 39 միավոր /19.54 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.56 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 21 միավոր /8.26 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 12 միավոր /1.21 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. երրորդ եռամսյակում օտարված հողերից 3210 միավորի /1453.16 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 402 միավոր /24.02 հա/, նվիրատվության գործարքներ՝ 733 միավորի /350.50 հա/, որից Երևանում՝ 58 միավոր /34.68 հա/ և փոխանակության գործարքներ՝ 44 միավորի /4.26 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /1.09 հա/:

Հանրապետությունում 2013թ. երրորդ եռամսյակում 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 1.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ սճել է 11.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 428.12 հա, որից 415.91 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3%-ը կամ 813 գործարքներ /185.17 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 229 միավոր /5.65 հա/, իսկ 74.0%-ը կամ 2374 միավորը /1262.87 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 173 միավոր /18.36 հա/: 2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 23 գործարք /5.11 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	0.24	84	0.57	141	4.84	17	3.80	5	0.33	101	8.53	50	5.71
Արագածոտն	62	19.95	3	0.17	4	0.31	14	1.26	231	134.19	0	0.00	76	8.59	2	0.01
Արարատ	22	24.79	2	1.00	36	2.51	14	0.30	180	83.90	0	0.00	122	9.78	7	0.13
Արմավիր	13	46.67	1	0.10	1	0.20	17	0.50	195	369.24	0	0.00	116	11.28	2	0.14
Գեղարքունիք	4	1.62	2	5.04	8	0.58	14	1.71	244	127.17	0	0.00	21	2.56	2	0.09
Լոռի	6	0.99	3	0.12	23	1.15	23	0.75	117	71.85	1	0.01	26	3.66	7	0.08
Կոտայք	27	37.19	6	0.52	66	2.83	70	2.02	237	136.18	1	5.90	243	19.33	36	3.74
Շիրակ	4	2.24	0	0.00	22	0.66	12	0.52	102	97.63	1	0.30	32	4.37	7	0.15
Սյունիք	1	1.51	5	4.60	5	0.11	9	0.13	55	58.52	0	0.00	8	0.36	5	0.27
Վայոց Ձոր	12	8.46	3	1.08	2	0.10	5	0.02	32	66.12	0	0.00	14	1.80	0	0.00
Տավուշ	12	3.92	0	0.00	14	0.80	21	1.20	41	17.12	1	0.11	17	1.28	7	2.38
Ընդամենը	163	147.34	29	12.87	265	9.82	340	13.25	1451	1165.72	9	6.65	776	71.54	125	12.70

Ստորև ներկայացվում է 2013թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	168	3.31	4	0.24	84	0.57	80	2.50	61	2.34	0	0.00	0	0.00	0	0.00	61	2.34
Արագածոտն	11	0.33	1	0.09	1	0.02	9	0.22	29	13.12	19	11.70	2	0.08	3	0.29	5	1.05
Արարատ	3	0.07	0	0.00	1	0.06	2	0.01	69	25.64	20	21.89	2	1.00	35	2.46	12	0.29
Արմավիր	7	0.28	1	0.10	0	0.00	6	0.18	25	47.20	13	46.67	0	0.00	1	0.20	11	0.33
Գեղարքունիք	2	0.13	0	0.00	0	0.00	2	0.13	25	7.59	3	0.40	2	5.04	8	0.58	12	1.57
Լոռի	13	0.17	1	0.10	4	0.03	8	0.04	41	2.32	5	0.49	2	0.02	19	1.11	15	0.70
Կոտայք	11	1.42	0	0.00	6	0.34	5	1.08	155	40.92	24	36.97	6	0.52	60	2.49	65	0.94
Շիրակ	11	0.33	0	0.00	9	0.29	2	0.04	27	3.09	4	2.24	0	0.00	13	0.37	10	0.48
Սյունիք	6	2.22	1	2.16	1	0.03	4	0.03	14	4.14	1	1.51	4	2.45	4	0.09	5	0.09
Վայոց Ձոր	1	0.005	0	0.00	0	0.00	1	0.005	20	8.11	11	6.92	3	1.08	2	0.10	4	0.01
Տավուշ	4	0.33	0	0.00	1	0.01	3	0.32	43	5.59	12	3.92	0	0.00	13	0.79	18	0.88
Ընդամենը	237	8.60	8	2.69	107	1.35	122	4.56	509	160.06	112	132.71	21	10.19	158	8.48	218	8.68

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 51 գործարք /14.63 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. երրորդ եռամսյակում, 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 19.8%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 64.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 25.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 31.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 20.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 9.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	15	7.19	22.3	7609.5	986.2	153	41.34	365.0	12000.0	3641.8
Ապարան	1	0.11	1165.5	1165.5	1165.5	30	13.68	86.5	2727.3	738.3
Թալին	3	4.40	37.8	62.2	50.0	23	34.09	93.6	5494.5	679.3
Ծաղկահովիտ						22	42.57	79.5	1000.0	283.3
Արարատի մարզ										
Արտաշատ						79	22.20	335.1	10833.3	2769.3
Մասիս	14	11.62	55.5	1168.8	455.0	58	40.28	200.0	11904.8	3064.1
Վեդի	6	10.27	33.3	1159.3	276.3	41	20.63	207.0	10795.1	1835.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	27.12	63.0	63.0	63.0	91	54.03	294.3	9090.0	1300.0
Բաղրամյան	5	13.95	70.9	70.9	70.9	17	244.38	90.6	2561.1	765.3
Վաղարշապատ	6	5.60	69.1	318.4	117.4	79	60.59	444.4	11764.7	2287.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.02	700.0	700.0	700.0	213	62.87	199.8	1875.0	429.1
Ճամբարակ	1	0.34	479.6	479.6	479.6	9	11.60	60.5	953.3	355.2
Մարտունի								51.1	2850.0	738.5
Սևան						1	0.31	52.2	2134.8	318.5
Վարդենիս	1	0.04	55.0	55.0	55.0	21	52.40	41.2	2575.1	424.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.14	2446.3	2446.3	2446.3	20	9.64	170.4	6424.2	577.1
Գուգարք						31	12.09	234.6	6065.9	771.7
Սպիտակ						2	0.59	250.0	5555.5	730.8
Ստեփանավան	4	0.35	606.2	710.7	661.3	28	18.21	90.6	1686.6	331.7
Տաշիր						32	17.29	45.3	1384.4	160.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	13	6.25	75.1	1621.3	409.3	95	45.47	279.3	11942.7	4271.1
Եղվարդ	9	30.30	68.9	1053.1	444.6	98	60.37	174.4	11971.8	2503.8
Հրազդան	2	0.42	587.5	1100.0	843.8	43	30.21	130.5	10256.4	1563.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.24	66.1	687.5	301.9	43	27.26	252.0	1693.1	633.2
Ամասիա						4	13.94	40.9	261.0	125.5

Անի						17	24.76	110.6	546.9	392.8
Աշոցք						10	12.62	58.5	215.8	129.3
Արթիկ						28	19.06	79.4	1428.6	422.7
Սյունիքի մարզ										
Գորիս						11	13.02	92.6	1023.2	731.7
Կապան	1	1.51	516.0	516.0	516.0	7	4.77	120.0	841.6	367.4
Մեղրի						4	0.25	193.0	3000.0	732.7
Սիսիան						32	40.33	46.3	1977.4	554.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	6.92	35.4	316.3	140.0	18	55.10	125.0	10000.0	1925.0
Վայք						14	11.02	58.8	1430.7	637.2
Տավուշի մարզ										
Բերդ						16	3.50	213.3	3783.8	685.5
Իջևան	11	3.90	154.6	550.0	352.4	7	3.11	267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան	1	0.02	4802.4	4802.4	4802.4	17	9.53	46.7	7368.4	890.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվելագույն	Միջին			Նվազագույն	Մասվելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	1238.0	112.7	1768.3	940.5	60	60348.2	130.7	22200.0	2580.2
Ապարան	1	1680.0	452.0	452.0	452.0	10	10403.0	124.1	609.6	390.0
Թային						4	8000.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	3900.0	60.0	214.3	91.5
Արարատի մարզ										
Արտաշատ						37	35341.4	173.9	7140.3	897.3
Մապիս	35	24575.4	980.7	1806.1	1215.2	68	42943.4	187.5	25000.0	1207.3
Վեդի						17	19547.0	126.1	5000.0	660.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						48	49937.1	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	2000.0	95.9	95.9	95.9	64	57664.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	5210.0	186.6	1084.3	683.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	6	5578.0	219.5	330.0	241.7	11	11533.0	119.3	5000.0	281.9
Սևան	1	21.3	700.5	700.5	700.5	2	2625.0	240.0	3110.4	315.0
Վարդենիս	1	151.6	1200.0	1200.0	1200.0	4	6284.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	3	144.0	778.8	1650.0	1432.2	9	12771.0	114.3	1388.9	216.9
Գուգարք	11	6342.3	151.2	3234.0	1891.6	10	16124.7	77.9	14083.3	1259.2
Սպիտակ	3	3076.5	153.3	677.3	311.2	1	2250.0	104.9	1348.3	206.5
Ստեփանավան	1	1500.0	187.2	187.2	187.2	5	3917.3	88.2	1666.7	175.5
Տաշիր	1	82.0	587.8	587.8	587.8	1	1490.0	45.3	400.0	90.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	48	13151.1	275.5	5672.2	3442.0	126	95170.9	264.5	35353.5	1992.2
Եղվարդ	11	11364.0	244.2	2488.2	1342.4	99	79542.4	173.6	27000.0	2856.0
Հրազդան	1	409.0	4750.0	4750.0	4750.0	15	12950.5	117.7	34848.5	1317.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	295.0	2500.0	2820.5	2660.3	14	11108.0	113.6	18750.0	334.5
Ամասիա						1	2580.0	45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	349.3	351.8	350.6	2	1196.1	67.9	180.6	175.1
Աշոցք						3	17280.0	40.8	144.0	63.5
Արթիկ	8	2184.5	279.2	3933.3	1357.4	11	10998.0	111.8	5000.0	217.3
Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	368.0
Կապան	4	869.9	1317.5	2600.0	1808.1	3	1651.0	67.9	2638.9	302.4
Մեղրի						4	1930.5	68.5	632.9	216.2
Սիսիան						1	25.0	123.5	875.0	209.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						12	13243.4	96.7	7659.6	505.1
Վայք	2	975.2	856.5	931.5	894.0	2	4750.0	120.7	1448.3	225.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	2427.0	891.2	891.2	891.2	2	1946.5	75.8	810.0	119.0
Իջևան	12	5502.0	214.3	3000.0	2290.1	11	7141.0	74.1	14423.1	517.3
Նոյեմբերյան						4	3731.9	125.0	1948.1	230.0

2013թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2099 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.2%:

2013թ. երրորդ եռամսյակում, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը մնացել է անփոփոխ, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել ` 2.8%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 146 բնակարանների, 219 անհատական բնակելի տների, 887 հասարակական նշանակության, 241 արտադրական նշանակության օբյեկտների, 560 միավոր /1233.57 հա/ հողերի, 1 այգետնակների և 45 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 26 վարձակալության գործարքների, այդ թվում 5 միավոր /0.13 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 13.0%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ ` 30%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1233.57 հա հողերից 2.89 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1230.69 հա հողերից 1144.55 հա գյուղատնտեսական նշանակության, 34.28 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.30 հա` հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում` 403.93 հա, որից 378.47 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6299 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել է 5.4%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 13.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /54.4%/, առանձնատների /22.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.8%/ և հողերի /7.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3740 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 20.6%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 27.0%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 558.67 հա հողեր, որից 58.66 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 81.9%-ը կամ 457.65 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 3.81 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 166.80 հա, որից 143.61 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 553 գործարքներ, որից 397-ը՝ Երևանում: 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 15.7%-ով, ընդ որում Երևանում՝ 19.6%-ով, մարզերում միասին վերցրած՝ 6.8%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 26.5%-ով, ընդ որում Երևանում՝ 42.8%-ով, մարզերում միասին վերցրած նվազել է 1.9%-ով:

2013թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5116 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2013թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 7.1%-ով, իսկ 2012թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 14.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.5%/:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե